

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

08.03.2019

Սիրելի տիկնայք, տատիկներ, մայրեր և քույրեր,

Ի սրտե շնորհավորում եմ ձեզ Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի առթիվ:

Անհիշելի ժամանակներից հայ կինը եղել է ընտանեկան ջերմության և ավանդույթների իրական կրողն ու շարունակողը: Ինչ խոսք, ոչ միշտ է ասվում այդ մասին, սակայն նկատելի և անգնահատելի է ձեր՝ հոգատար մոր, սիրող կնոջ, հայրենի օջախի անձնուրաց պահապանի առաքելությունը: Ձեր շնորհիվ է, որ ընտանիքը շարունակում է մնալ մոլորակի ամենաջերմ ու հաճելի անկյունը:

Սիրելի կանայք, դուք շարունակում եք ձեր ուրույն դերակատարումն ունենալ նաև պետականաշինության գործում, հասարակական և քաղաքական կյանքում՝ մեր իրականությունը դարձնելով առավել ներդաշնակ ու հանդուրժող:

Ուստի, թող ձեզանից սկիզբ առնող սերն ու բարությունը երբեք չնվազի, այլ փոխադարձվի և իր տարածումը գտնի ամենուր: Գարնան սկիզբն ավետող այս գեղեցիկ տոնի տրամադրությունն էլ թող միշտ ուղեկցի ձեզ՝ պարգևելով այն լավագույնը, որին իրավամբ արժանի եք:

***Լավագույն ցանկություններով՝
Համբարձում Մաթևոսյան***